

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 47-25
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

«16» դեկտեմբերի 2024 թ.

ք. Երևան
«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս կազմակերպության նախագահ Գրիշա Խաչատրյանի, մի կողմից և ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանի մյուս կողմից, հետագայում՝ Կողմեր, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն Պայմանագրով Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է սպասարկել Պատվիրատուի մոտ ներդրված «Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը» (այսուհետ՝ ՀԿՏ)։ Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին սույն պայմանագրի 3.1 և 3.2 կետերով սահմանված կարգով, չափերով ու ժամկետներում վճարել մատուցված ծառայությունների դիմաց։

- 1.2 ՀԿՏ սպասարկումը ներառում է.
- Մշտական պրոֆիլակտիկա և ՀԿՏ-ում բացահայտված ծրագրային սխալների վերացում, բարելավումների կատարում,
 - Պատվիրատուին ՀԿՏ-ը այլ տեղեկատվական համակարգերի հետ ինտեգրման և փոխգործելիության ապահովման հարցերով մասնագիտական խորհրդատվության տրամադրում,
 - Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուի սերվեր համակարգում ՀԿՏ և անհրաժեշտ այլ ծրագրերի տեղադրում, վերատեղադրում, թարմացումների կատարում,
 - Պատվիրատուի սերվեր համակարգում ՀԿՏ նոր տարբերակի տեղադրում, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, համակարգի տեղափոխում նոր սերվերային միջավայր,
 - Պատվիրատուին ՀԿՏ-ում կատարված փոփոխությունների և բարելավումների մասին իրազեկում, խորհրդատվության տրամադրում,
 - Պատվիրատուին ՀԿՏ-ում կատարված փոփոխությունների, մշակված նոր բաղադրիչների վերաբերյալ ուղեցույցների կամ դրանց հղումների տրամադրում,
 - Պատվիրատուին ՀԿՏ թողարկման և շահագործման հետ կապված ցանցային լուծումների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում և անհրաժեշտ ցանցային կարգերումների կատարում,
 - Համակարգի օգտվողների կառավարման ենթահամակարգում լիազորությունների տրամադրման հետ կապված ծրագրային փոփոխությունների և լրացումների կատարում,
 - Պատվիրատուի կողմից ՀԿՏ գործարկման արդյունավետության քանակական և որակական մշտադիտարկման պարբերաբար իրականացում։ Բացահատված թերությունների և խնդիրների մասին Պատվիրատուին տեղեկացում և խորհրդատվական աջակցության տրամադրում,
 - Պատվիրատուի գրավոր դիմումի հիման վրա նրա կողմից ներկայացված մասնագետների վերապատրաստում (այդ թվում հեռավար եղանակով),
 - ՀԿՏ-ի հետ աշխատելու վերաբերյալ Պատվիրատուի աշխատակազմին (ներառյալ բնակավայրերի վարչական ղեկավարներին և օպերատորներին) խորհրդատվության և տեխնիկական աջակցության տրամադրում. այդ թվում հեռախոսի, էլեկտրոնային կապի միջոցներով /ինտերնետ, էլ. փոստ, հեռավար կառավարման ծրագրեր/:
 - Պատվիրատուի ցանկությամբ և համաձայնությամբ ՀԿՏ-ում կիրառվող փաստաթղթերի ձևաթղթերում անհրաժեշտ փոփոխությունների կատարում,
 - Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ապահովման համար ՀԿՏ և Mulberry սերվերների հասցեների ռեեստրի վարում և պարբերաբար փոխանցում պատվիրատուին և այլ շահագրգիռ կողմերին,
 - ՀԿՏ այլ տեղեկատվական համակարգերի հետ փոխգործելիության ապահովման և ինտեգրումների կատարում (խորհրդատվություն, կարգաբերումներ, պարամետրային տվյալների գրանցումներ և այլն),
 - Պատվիրատուի համար Կատարողի պաշտոնական կայքում (<https://infosys.am>) «Սպասարկում» հարթակի ապահովում և վերջինիս միջոցով Կատարողի կողմից ՀԿՏ սպասարկման վերաբերյալ առցանց ստացված դիմումներին և հարցումներին արագ արձագանքում։

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

- 2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝
- 2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից ծառայությունների մատուցման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը։
- 2.2 Կատարողն իրավունք ունի՝
- 2.2.1 Սույն Պայմանագրի 3 կետով նշված ժամկետներում և կարգով ստանալ մատուցված ծառայությունների գումարը։
- 2.3 Պատվիրատուն պարտավոր է՝
- 2.3.1 Պայմանագրի 1.1 և 1.2 կետերով նախատեսված ծառայությունները մատուցելու համար նախօրոք ապահովել անհրաժեշտ համապատասխան բնութագրիչներով օժտված տեխնիկական միջոցների և ստանդարտ ծրագրային միջոցների (այդ թվում տվյալների անվտանգության և գաղտնիության ապահովման) առկայությունը։
- 2.3.2 Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները՝ սույն պայմանագրի 3 կետով սահմանված կարգով, չափին և ժամկետներին համապատասխան։
- 2.3.3 Ապահովել ՀԿՏ շահագործման կանոնների պահանջները՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը համարվող Հավելված 1-ի։
- 2.4 Կատարողը պարտավոր է՝
- 2.4.1 Ապահովել ծառայությունների մատուցումը՝ սույն Պայմանագրով սահմանված պայմանների համաձայն։

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1 Սույն Պայմանագրով նախատեսված սպասարկման ծառայությունների արժեքը կազմում է ամսական 55000 (հիսունհինգ հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

3.2 Պատվիրատուն պարտավոր է վճարել Կատարողին սպասարկման ծառայությունների ամսական գումարը համապատասխան հաշիվ-ապրանքագիրը ստանալուց 20 (քսան) օրվա ընթացքում:

3.3 Լրացուցիչ ծառայություններ, որոնք նախատեսված չեն սույն Պայմանագրում, կարող են մատուցվել Կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրերի հիման վրա:

3.4 Պայմանագրի գինը կարող է ավելանալ համայնքի միավորման/վերամիավարման, սպասարկվող համակարգում նոր բաղադրիչների ավելացման, ՀԿՏՀ ակտիվ օգտատերերի քանակի ավելացման, այլ տեղեկատվական համակարգերի հետ փոխգործելիության ապահովման և ինտեգրման, տվյալների փոխանակման մեխանիզմների գործարկման հետ կապված ծառայությունների մատուցման դեպքում՝ կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի կամ նոր պայմանագրի հիման վրա:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների՝ Կողմերի երեքական ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2025 թ. հունվարի 3-ին և շարունակում է գործել մինչև 2025 թ. դեկտեմբերի 31-ը: Պայմանագրի ժամկետը լրանալուց հետո, եթե կողմերի միջև չի կնքվել նոր պայմանագիր կամ սույն Պայմանագիրը չի դադարեցվել Պայմանագրի 5.2 կետի դրույթներին համապատասխան, ապա այն ինքնաբերաբար, ամեն անգամ վերսկսվում է ևս 1 (մեկ) տարի ժամկետով:

5.2 Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից՝ մեկ ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցելով մյուս կողմին:

6. Ֆորս - մաժոր

6.1 Սույն Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ դրույթներ

7.1 Կատարողը ՀԿՏՀ-ի սպասարկման ծառայությունները մատուցում է աշխատանքային օրերին, ժամը 9:00-ից մինչև 18:30-ը:

7.2 Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8. Կողմերի հասցեները և հաշվարկային հաշիվները

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Լոռու մարզ
Լոռի բերդի համայնքապետարան
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն.

«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ
ք. Երևան, Կոմիտասի պող. 51
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

Հ/Կ 900252144028

Հ/Կ 220003351206000

ՀՎՀՀ 06954163

ՀՎՀՀ 03012547

Համայնքի ղեկավար
Ա. Ներսիսյան

Կազմակերպության նախագահ
Գ. Խաչատրյան

Կ.Տ

Կ.Տ



ԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ՀԿՏՀ) ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

ՀԿՏՀ-ում առկա տվյալների անվտանգությունը և հուսալիությունն ապահովելու համար պատվիրատուի կողմից անհրաժեշտ է իրականացնել ստորև նշված գործողությունները.

- ՀԿՏՀ տվյալների շտեմարանը և ֆայլերը պարտադիր կերպով և պարբերաբար (շաբաթական մեկ անգամ) պետք է արխիվացվեն ու պատճենվեն արտաքին կրիչների (արտաքին կոշտ սկավառակ (HDD), SSD, DVD, ֆլեշ դիսկ) վրա: Ցանկալի է արխիվների պատճենում արտաքին կրիչների վրա կատարել երկու օրինակից և պահպանել իրարից հեռու գտնվող (ինտրավիրտուալ ղեկավարման տարբեր շենքերում) չիրկիզվող պահարաններում: Այն դեպքում, երբ համայնքապետարանը ձեռք կբերի տվյալների պահպանման արտաքին կուտակիչ (HDD, SSD) ապա ՏՀԿԿ մասնագետների կողմից այն կկարգաբերվի՝ ինքնաշխատ արխիվացում կատարելու համար:
 - Մինչև ՀԿՏՀ տվյալների պահեստային պատճենումը պետք է ՀԿՏՀ-ի «Կայքի կառավարում» --> «Բազայի արխիվացում» բաժնում սեղմել «Կատարել Backup» կոճակը: Արտաքին կրիչների վրա պետք է ամբողջությամբ արտագրել (պատճենել) (copy-paste) սերվերի D սկավառակում գտնվող CMISDBBackups և CMISUploadFiles թղթապանակները (իրենց պարունակությամբ):
 - Սերվեր համակարգիչը պետք է միացված լինի գործող անխափան սնուցման սարքի (UPS) միջոցով: Եթե անխափան սնուցման սարքը «SMART» տիպի է, ապա այն պետք է կարգաբերվի, որպեսզի սերվերն ինքնաշխատ անջատվի անխափան սնուցման սարքի ռեսուրսի սպառման մուտեցման դեպքում:
 - Արգելվում է.
 - փոխել սերվեր համակարգչի անունը,
 - հեռացնել սերվերում տեղադրված օպերացիոն համակարգը և սպասառու ծրագրերը,
 - սերվերի վրա տեղադրել այլ օպերացիոն համակարգ, ծրագրեր, խաղեր, տեսա-ձայնային ֆայլեր և այլն,
 - սերվերն օգտագործել այլ նպատակներով, շահագործել նաև որպես աշխատանքային կայան, գործարկել տարբեր ծրագրեր /այլ թվում գրասենյակային/,
 - հանել սերվեր համակարգչի մշտական հիշող սարքերը կամ փոխել դրանց միացման հերթականությունը,
 - սերվերի հետ խնդիրներ (սարքավորումային, ծրագրային և այլն) առաջանալու դեպքում դրանք փորձել լուծել պայմանագրային հիմունքներով կամ որևէ իրավական ակտով իրավասություն չունեցող այլ անձի կամ կազմակերպության միջոցով,
 - այլ անձանց (բացառությամբ պայմանագրային հիմունքներով կամ որևէ իրավական ակտով իրավասություն ունեցող անձի կամ կազմակերպության մասնագետներին՝ առաջացած խնդիրներին լուծումներ տալու և համապատասխան կարգաբերումներ կատարելու նպատակով) տրամադրել սերվերին հեռահար հասանելիություն: Հասանելիություն տալուց առաջ ստուգել պասարկող մասնագետի ինքնությունը և համոզվել դրանում,
 - այլ անձանց մուտքը (բացառությամբ համայնքապետարանի լիազորված մասնագետի/մասնագետների և իրենց համաձայնությամբ և ներկայությամբ պասարկող կամ այլ անհրաժեշտ աշխատանքներ կատարող մասնագետների) սերվերային սենյակ:
 - Անհրաժեշտ է մշտական հիմունքներով հետևել համակարգ մուտքերին (համակարգում առկա User Audit-ի միջոցով): Կասկածելի հաջողված մուտքերի (login) կամ մուտքերի փորձերի դեպքում անհապաղ միջոցներ ձեռք առնել, առաջնորդվել իրավական ակտերով սահմանված ընթացակարգերով, ինչպես նաև դիմել սպասարկող կազմակերպության մասնագետներին:
 - Օգտատերերի մուտքը համակարգ կազմակերպել երկգործոն նույնականացման ակտիվացմամբ:
 - Համակարգում գրանցված օգտատիրոջը տրամադրել ՀԿՏՀ տարբեր բաղադրիչների նկատմամբ համապատասխան իրավասություններ միայն այն դեպքերում, եթե նրանք անցել են խիստ նույնականացում և/կամ համակարգի կառավարչի կողմից նրան տրամադրվել է համակարգային հավաստագիր:
 - Համակարգում գրանցված օգտատերերի կողմից իրենց գրանցման տվյալներում որևէ փոփոխություն կատարելու դեպքում համակարգի կառավարիչը անմիջապես կձանուցվի: Եթե կատարված փոփոխություններն այնպիսին են, որ կարող են ենթադրել չարամտություն (օրինակ՝ օգտատերը փոխել է անունը, ազգանունը), ապա տվյալ օգտատիրոջ հաշիվը պետք է անհապաղ կասեցնել:
 - Սահմանափակել ՀԿՏՀ կառավարչների (ադմինիստրատորների) քանակը (ցանկալի է համայնքապետարանի կողմից ունենալ ՀԿՏՀ ընդամենը մեկ կառավարիչ, ով անցել է համապատասխան վերապատրաստում ՏՀԿԿ-ում):
 - ՀԿՏՀ-ում գրանցված օգտատերերի գաղտնաբառերը պետք է բաղկացած լինեն առնվազն 7 նիշից: Դրանք պետք է լինեն բարդ՝ ունենան առնվազն 1 մեծատառ նիշ, առնվազն 1 փոքրատառ նիշ, առնվազն 1 թիվ: Անհրաժեշտ է պարբերաբար (առնվազն տարին 2 անգամ), իսկ անվտանգային միջադեպերի դեպքում անմիջապես փոխել օգտատերերի գաղտնաբառերը:
 - Համակարգ մուտք գործելիս հրաժարվել վեբ դիտարկիչում հիշել ծածկանունը և գաղտնաբառը, հատկապես եթե մուտքը տեղի է ունենում այլ անձանց համակարգիչներից: Համակարգով աշխատանքն ավարտելուց հետո «Ելք» լինել համակարգից:

ՀԿՏՀ շահագործման ընթացքում առաջացած խնդիրների և հարցերի դեպքում անհրաժեշտ է դիմել «Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» ՀԿ մասնագետներին. հեռախոսակապի ((010) 246471, (094) 246471), համացանցային կայքի՝ www.infosys.am, էլեկտրոնային փոստի՝ isintellect@yahoo.com և այլ ժամանակակից միջոցներով կամ այցելել կազմակերպության գրասենյակ՝ ք.Երևան, Կոմիտաս 51, 2-րդ հարկ հասցեով:

Օտնոթացնող կանոններին, որի համար ստորագրում եմ

Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝


(ստորագրություն)

Ա. Ներսիսյան



«16» դեկտեմբերի 2024թ.
Կ.Տ